2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. *Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի* կողմից 2022 թվականին Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ թվով 5 միջնորդություն:

Հաշվետու ժամանակահատվածում Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված միջնորդություններից 2-ը մերժվել են, 1-ով դատավորին հայտարարվել է խիստ նկատողություն, իսկ 1-ով կարճվել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը:

2. *Արդարադատության նախարարի* կողմից 2022 թվականին Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ թվով 21 միջնորդություն:

Հաշվետու ժամանակահատվածում Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված միջնորդություններից 8-ը մերժվել են, 2-ով դատավորին հայտարարվել է նախազգուշացում, 4-ով՝ նկատողություն, 1-ով՝ խիստ նկատողություն, 2-ով դատավորի լիազորությունները դադարեցվել են՝ էական կարգապահական խախտման հիմքով, իսկ 2-ով կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը թողնվել է առանց քննության:

3. *Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի* կողմից 2022 թվականին Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ թվով 1 միջնորդություն:

Հաշվետու ժամանակահատվածում Բարձրագույն դատական խորհուրդը կարճել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը:

4. *Միջնորդություն կազմող հանձնախմբի* կողմից 2022 թվականին Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի նախագահին (լիազորությունները կասեցված) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ թվով 1 միջնորդություն:

Հաշվետու ժամանակահատվածում Բարձրագույն դատական խորհուրդն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցրել է դատավորի լիազորությունները:

5. *Բարձրագույն դատական խորհրդի* կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է թվով 25 որոշում:

Հաշվետու ժամանակահատվածում Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունվել է թվով 2 դատավորի լիազորությունները կասեցնելու մասին որոշում: